

**ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ- ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.  
ՍԵՐՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ\***

ԲԱԺԱՆՈՒՄ

Սկսած 1924 թ. գրված նամակներից, չնայած արտաքին հավաստիացումներին, արդեն նկատելի են Սյուրմեյանի և Թեքեյանի միջև առաջացող «անտարբերության եւ յոգնության» նշանները, որոնցից ամենացայտունը պատասխան նամակների ուշացումն է: Սառեցման դրդապատճառները կարող էին տարբեր լինել: Ամերիկայում Սյուրմեյանին կրթաթոշակով պետք է օգնեք մի ոմն հայ գորգավաճառ, որի օգնությունը Թեքեյանն էր հայցել: Սյուրմեյանը որևէ օգնություն չի ստացել և մատնվել է ծանր զրկանքների, ստիպված է եղել ճաշարանում ամաններ լվանալ՝ օրվա չոր հացը հոգալու համար: Նյութական ու հոգեկան այդ ծանր կացությունը կարող էր մղել ոչ միայն գրականության նկատմամբ աճող անտարբերության, որի մասին վկայում է իր նամակներում Սյուրմեյանը, այլև առհասարակ գրելու, այդ թվում և նամակներ գրելու ցանկության պակասի:

Նամակագրության ընդհատումների ու նաև վերջնական դադարի պատճառ կարող էին լինել ոչ միայն միասին Հայաստան մեկնելու անհնարինությունը\*\*, այլև խորհրդայնացված Հայաստանում տեղի ունեցող քաղաքական ու ազգային սահմանափակումները և ուրեմն՝ հայրենիքին ծառայելու նրանց ծրագրերի փոփոխումը: Չէ՞ որ նման Հայաստանը չէր կարող Թեքեյանի և մանավանդ Սյուրմեյանի իդեալը լինել: Ըստ երևույթին մեծ դեր են խաղացել նաև Սյուրմեյանի ամերիկյան դաստիարակությունն ու կրթությունը, որոնց ներքո ձևավորվել է մի ուրիշ՝ ոչ երազանքներով լեցուն և ոչ էլ գոհողությունների ու զրկանքների պատրաստ նախկին «սև հող վարող» մարդը, այլ ապահով կյանքից գայթակղված արդեն «միստրացած» ամերիկացին:

\* Սկիզբը տե՛ս նախորդ համարում:

\*\* Վահան Թեքեյանը Հայաստանում եղել էր 1911 թ. և 1919 թ.: Սյուրմեյանը՝ որպես Արմաշի երկրագործական վարժարանի սան, առաջին անգամ Հայաստանում է եղել 1920 թ.: Երկրորդ անգամ Սյուրմեյանը Հայաստան է այցելել 1964 թ., երբ արդեն ճանաչված գրող էր: Երրորդ այցելությունը տեղի է ունեցել 1970 թ.:

Հնարավոր է՝ Սյուրմեյանը ազդվել է նաև Հայ կրթական հիմնադրամի կողմից տրվող (որի միջնորդը Թեքեյանն է եղել)\* իրեն տրամադրված կրթաթոշակի դադարեցումից: Ուշագրավ է, որ Թեքեյանի այն առաջարկին, որ ինքը ցանկանում է Սյուրմեյանի բանաստեղծությունների գրքույկը հրատարակել, վերջինս, ի շարս այլ առարկությունների, նրան Ամերիկայից գրել է. «Ես մտերիմներու շրջանակ մը ունիմ: *Ու արդէն իսկ այս շրջանակէն հոգիս անհրաժեշտ սնունդը կ'առնէ...*»<sup>1</sup> (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Իր կապերը խզելով հայ կյանքի՝ հայերեն թերթերի, հայ շրջանակների, հայ գրի հետ՝ Սյուրմեյանը, հնարավոր է, դրանով նաև յուրովի «վրեժ» էր լուծում իրեն բաժին հասած դառը մանկության համար:

Սրանցից ամեն մեկը կարող էր վճռական դեր խաղալ Սյուրմեյանի՝ հայրենիքում ծառ տնկելու, ջրանցք փորելու ու այլ աշխատանքներ կատարելու ծրագրերից հրաժարման համար: Նամակագրության ընդհատման այլ հիմքեր ևս կային: 1920-ական թվականների սկզբին նա թեև գրում էր բանաստեղծություններ, սակայն նպատակ չունեի բանաստեղծ դառնալու: Այդ հարցում նրա մեջ սաղմնավորումներ եղել են հենց սկզբից, որոնց մասին նա ակնարկում է Թեքեյանին վերաբերող իր անգլերեն հոդվածում՝ նշելով, որ դեռևս Կ. Պոլսում «խաբկանք մը կ'խաղայի»՝ ձևացնելով, թե «բանաստեղծ» եմ ուզում դառնալ, մինչդեռ «Ես բանաստեղծ չեի... պետք ունեի բարեկամներու», որոնք կարենային ինձի օգնել Ամերիկա երթալու համար»<sup>2</sup>: Ուշագրավ է, որ հետագայում անդրադառնալով այս հարցին՝ Սյուրմեյանը գրել է, որ բանաստեղծ չդառնալու իր վճռի վրա ազդել է նաև Պետրոս Դուրյանի՝ թոքախտից 21 տարեկանում մահանալու իրողությունը:

Սյուրմեյանական այս «խաղը» շարունակվել է նաև հետագա տարիներին: Նույն հոդվածում նա վկայում է, թե ամեն գոհողություն «չափազանց մեծ չէր իմ ամերիկյան դաստիարակությանս համար», և որ Ամերիկայից Թեքեյանին «երբեմն նոր գրած մեկ բանաստեղծությունս կղրկեի, *պարզապես զինք հաճոյացնելու համար*»<sup>3</sup> (ընդգծումը մերն է – Ա. Ա.):

Ամերիկյան կյանքի ընթացքում Սյուրմեյանն արդեն հասցրել էր իմանալ, որ սփյուռքաբնակ հայ գրողը «դատապարտված է հոգեկան սուկալի մենության» և ուրեմն՝ աղքատության<sup>4</sup>, մի բան, որ նա ոչ մի կերպ չէր հանդուրժում, և որը չէր մտնում նրա ծրագրերի մեջ: Նրա կյանքի հե-

---

\* Թեքեյանի միջնորդությամբ Բաղդադի տիկնանց միության կողմից կրթաթոշակ է ստացել նաև Սյուրմեյանի եղբայրը՝ Օննիկ Սյուրմեյանը, որ Վիեննայի Մխիթարյանների մոտ երաժշտական կրթություն էր ստանում:

<sup>1</sup> Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէլեանին, էջ 89:

<sup>2</sup> Թեքեյան Վ., Լևոն-Զավեն Սյուրմեյան, էջ 96:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 97:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 98:

տաքրքրությունները, ինչպես գրում է իր բանաստեղծություններից մեկում, այլևս թեքվել էր դեպի «Տուներուն մէջ լուսաւոր»:

Որ Վահան Թեքեյանը այս ամենի մասին ինչ-որ կանխագագումներ է ունեցել, վկայում են նրա նամակներում առկա ակնարկումներն ու մտավախությունները: Իր որոշ նամակներում հույս հայտնելով հանդերձ, որ «պիտի հանդիպինք նորէն իրարու», որ Սյուրմեյանն իրեն պատճառում է «մաքուր ու տաքցնող զգացում», որ «ոչինչ կայ, որ զիս կարենայ զօրացնել և սփռփել, ոչինչ քեզմէ զատ» և այլն, այնուամենայնիվ Թեքեյանը նկատել է տալիս, որ «թէ պատահի՝ որ... դուն ալ զիս սխալ կամ գէշ հասկնաս եւ քեզ ալ կորսնցնես՝ յուսահատութիւնս անդարձ կըլլայ եւ չեմ գիտեր, թէ ի՛նչի կրնամ կառչիլ այնուհետեւ...»<sup>1</sup>: Նման մտավախության մեկ այլ արտահայտություն Կահիրեից գրված՝ 1925 թ. հուլիսի 29-ի թվակիր նամակն է պարունակում, ուր Թեքեյանը գրում է, որ «առաջ ինձմէ պատասխան չստացած ալ կը գրէիր, մինչ հիմա, 6-7 ամիսէ ի վեր, բնական գտնել կը թուիս իրարմէ լուր չառնիլը... ու պէտք չես ունենար իմ գորովիս»<sup>2</sup>:

Իսկ 1926 թ. հունվարի 18-ի թվակիր նամակում նա գրել է. «Հիմա իսկ, այս վայրկեանիս, սրտես ու մտքես խօսքեր կը խուժեն գրչիս ծայրը ու կը վարանիմ զանոնք գրելու, ետ կը դարձնեմ զանոնք՝ որովհետեւ չեմ գիտեր, թէ ի՛նչպէս պիտի գտնեն քեզ, չափազանց պիտի զգացի՞ս՝ թէ *չափազանց անտարբեր պիտի մնաս անոնց հանդէպ*»<sup>3</sup> (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*):

«Չափազանց անտարբեր պիտի մնաս...»: Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանը այնքան էր հավատացել ու վստահել նրան, ապրել մեծ մի ոգևորություն, որի մասին անգամ մի ամբողջ բանաստեղծություն՝ «Մաթէ համրիչը», գրել «Ձաւէնիս» ընծայական-մակագրությամբ, իր նամակներից մեկում գրել. «... դուն ունենալով այդ երկուքը՝ հպարտութիւն եւ խոնարհութիւն, կամքի ու խելքի հետ միասին, եղած ես տարիքիդ ամենագեղեցիկ մէկ տիպարը՝ *որմէ տարբերը չեմ փափաքիր եւ աւելին չեմ երեւակայեր*»<sup>4</sup> (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*):

Իսկ ինչ ասել Թեքեյանի այն ջանքերի մասին, որոնք նա կատարել է Սյուրմեյանի բանաստեղծությունների «Լույս զվարթ» գիրքը 1924 թ. Փարիզում<sup>5</sup>՝ հեղինակի տպագիր ու անտիպ գործերը հավաքելու, խմբագրելու, իր խոսքով ասած՝ «հպումներ» կատարելու<sup>6</sup>, առաջաբան գրելու և իր հաշվին

<sup>1</sup> Նամականի, էջ 252:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 280:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 291:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>5</sup> Ժողովածուն ունեցել է նաև վերահրատարակություններ՝ Նիւ Եորք, 1950, Նյու Յորք, 1972, Երևան, 2014:

<sup>6</sup> Այդ առթիվ, օրինակ, Սյուրմեյանը 1924 թ. նոյեմբերի 22 թվակիր իր նամակում գրում է. ««Ցայգայինին վրա երևի շատ տանջվեցար զայն իր այժմյան ներկայանալի ձևին վերածելու

տպագրելու գործում: Թեքեյանի խանդավառությունը այնքան մեծ է եղել, որ գրքի «Յառաջաբանում» Թեքեյանը Սյուրմեյանին բնութագրում է ոչ ավել, ոչ պակաս, քան «արդեն իսկ իր ինքնությւնը ունեցող բանաստեղծ-արուեստագետ»<sup>1</sup>: Թեքեյանը նաև իր նամակներում է գերագնահատում Սյուրմեյանի գրած բանաստեղծությունները. օրինակ՝ նա գրում է, որ դրանք «ամենէն գեղեցիկ, հարուստ, յուզիչ եւ կատարեալ քերթուածներէն են, որոնք կը ճանչնամ թէ հայերէնի եւ թէ ֆրանսերէնի մէջ»<sup>2</sup>:

Սյուրմեյանի վերոհիշյալ գիրքը, որը ամփոփում է 21 բանաստեղծություն, ևս վերնագրվել է Թեքեյանի կողմից՝ նկատի ունենալով հայկական եկեղեցիներում վաղ առավոտյան երգվող շարականի անվանումը, որը, ըստ Թեքեյանի մեկնության, պատշաճում է նաև հեղինակի գրական մուտքին, և որը զարմանալի մի գուգադիպությամբ արտահայտում էր նաև Սյուրմեյանի մոր անունը՝ Չվարթ:

Վերոհիշյալ բարձր գնահատումները, իհարկե, գալիս էին Սյուրմեյանի նկատմամբ տաճած սիրուց, քանի որ այդ գործերի մեծ մասը, եթե չհաշվենք մի քանի բանաստեղծություններ՝ «Կռուի երթ», «Փափագ», ուր զգալի է մեծարենցյան շունչը, «Իրիկունը նավուն վրա» և առանձին պատկերներ, քիչ գեղարվեստական արժեք ունեն և լոկ փաստական դեր են խաղում: Ավելի հասուն տարիքում՝ 1924 թ. գրած «Ասացուածք ծառ տնկելու առթիւ» բանաստեղծությունը, որն առաջին անգամ տպագրվել է «Պայքար» թերթում՝ Չաւեն Գեղունեան ստորագրությամբ, այս գրքի միակ արժեքավոր ու մնայուն գործն է, որը և առանձնահատուկ ուշադրության է արժանացել Թեքեյանի կողմից. «Կարդացի եւ օրօրուեցայ, ծառի մը պէս, անոր նուագէն, անոր ծածանքէն»: Մեծ բանաստեղծը նաև ուշագրավ բացահայտումներ է կատարել՝ նշելով, թէ «վերնագիրը դրած ատենդ եթէ Չարեանին մտածած ես (նկատի ունի Կոստան Չարյանի՝ 1922 թ. լույս ընծայած «Օրերի պսակը» գրքի «Ասածուածներ» շարքը – *Ս. Ս.*), մարմինը հետզհետէ լեցուած պահուն, գիտակից կամ անգիտակից խորհուրդի մէջ, ես քիչ մը գտնուած եմ... մեղադրանք մը պէտք չէ տեսնես այս ըսածիս մէջ, բանաստեղծութեան մը համար, որուն ամբողջութիւնը դուն ես ամբողջովին, խորքով եւ ձևով»:

Տէր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ: Ես կը տնկեմ զայն ահա

Փխրուն եւ սեւ հողին մէջ ուր պապերըս կը պառկին.

Ես՝ անոնց թոռը հսկայ, այս հողին տէրն եմ կրկին,

Ու արեւուն տակ կ'աճիմ, անունն իրենց շուրթիս վրայ:

Թեքեյանը նաև դիտողություններ է արել բանաստեղծության մի քանի կետերի մասին, մասնավորապես երրորդ տան երկրորդ տողի վերաբերյալ՝

---

համար, այլապես որքան որ ես կհիշեմ, իմ բուն գրվածքս այնքան արժեքավոր չէր, որքան հիմա կտեսնամ զայն հատորիկին մէջ» (Թեքեյան Վ., նշվ. աշխ., էջ 106):

<sup>1</sup> Սիւրմէլեան Լ. Զ., Լոյս գուարթ, Բ տպագրություն, Նյու Յորք, 1950, էջ 91:

<sup>2</sup> Նամականի, էջ 267:

նշելով, որ «Երկիրն իմ քար ու գիր է, որուն ես թոռն եմ վայրի» ձևակերպումը ունի անհաջող վերջաբառ՝ *վայրի*՝ մանավանդ բանաստեղծության «սքանչելի վերջին տողին մոտ», որը գալիս է կրոնական պաշտամունքի ուժեղ կնիքը դնելու քերթվածին<sup>1</sup>:

Այդ բառի վերաբերյալ հարկ է ասել, որ բառագտագործումը գալիս է մի կողմից դեռևս 1923 թ. հունվարի 22-ի՝ Վ. Թեքեյանին ուղղված նամակում արտահայտված մի ձևակերպումից. «Հիմա նպատակս է «մեծնալ մաքրությամբ, ուժով ու ավելցած շնորհներով» (չակերտների մեջ առնված խոսքը Թեքեյանինն է – *Մ. Մ.*), որպեսզի վաղը վայրի ձիեր հեծնող տղու մը նման կանգնիմ առջև զինվորի մը նման...»<sup>2</sup>: Մյուս կողմից՝ Թեքեյանը «Լույս գվարթի» իր «Ցառաջաբանում» գրում է, որ նախկինում գրված և իրեն ուղղված նամակներից մեկում Սյուրմեյանը ինքն իր մասին գրել է. «Հիմա ես կատաղի տղայ մըն եմ»<sup>3</sup>, որը այս բանաստեղծությունում ձևակերպված «որուն ես թոռն եմ վայրի» տողի ոչ այնքան հեռու տարբերակն է:

Թեքեյանի նուրբ աչքից չի վրիպել բանաստեղծության առաջին տան մեջ մեկ հանգի պակասը և երկրորդ տան մեջ մեկ ավելորդ հանգի առկայությունը: Թեքեյանը դրվատական խոսքեր է ասել նաև «Վերջին աղոթք» բանաստեղծության վերաբերյալ, որը Սյուրմեյանը գրել է դեպի Ամերիկա գնալիս նավի մեջ. // «Այս իրիկուն իմ հոգիս եկեղեցի մ'է հրսկայ // Պատարագէն վերջ թափուր...»: Թեքեյանը երբեմն շրջանցել է իր զգայական մոտեցումները Սյուրմեյանի գրածների վերաբերյալ և հանդես եկել որպես անկողմնակալ գրադատ: Նրան ուղղված որոշ նամակներ ցույց են տալիս, որ Թեքեյանը չի հավանել Սյուրմեյանի այս կամ այն բանաստեղծությունը, տողը, պատկերը, ընտրած բառը: Այսպես՝ 1923 թ. մարտի 6 թվակիր նամակում, օրինակ, նա գրում է. «Ոտանաւորիդ երկրորդ variante-ն (տարբերակը – *Մ. Մ.*) ալ առի. առաջինէն շատ տարբեր չէ... քեզի պիտի յանձնարարեմ, որ առայժմ ճիգ չընես բանաստեղծութիւն գրելու»<sup>4</sup>: Թեքեյանը խորհուրդ է տալիս «արձակ նօթեր, յուշագիրի պէս բան մը» գրել, մի բան, որը, որքան էլ զարմանալի թվա, հետագայում հենց համբավ բերեց Սյուրմեյանին:

Թեքեյանի և Սյուրմեյանի նամակագրությունը, որը նրանց հարաբերությունների միակ միջոցն էր, եթե չհաշվենք լուսանկարների փոխանակման մի քանի դեպքերը և դրամական փոխանցումները, աստիճանաբար ավելի ու ավելի ընդհատումներով է ընթանում: Ավելին՝ այդ նամակներում նվազում է մանավանդ ոգևորության ու հավատի այն ոգին, որ թևածում էր նախկինում: 1924 թ. հունվարի 20-ին Փարիզից գրած իր նամակում Թեքեյանը մտահոգություն է հայտնում, թե «կը կարծեմ թէ կը մոռնաս, պիտի մոռնաս, պիտի

<sup>1</sup> Նամականի, էջ 256-257:

<sup>2</sup> Թեքեյան Վ., Լևոն-Չավեն Սյուրմեյան, էջ 101:

<sup>3</sup> Վահան Թեքեյանի նամակները Լևոն Չավեն Սյուրմեյանին, էջ 89:

<sup>4</sup> Նամականի, էջ 223:

չփնտռես նամակս ու զիս», և ապա հարց տալիս. «Որքա՞ն պետք ունիս ինձի...»<sup>1</sup>:

Թեքեյանի կյանքում 1925 թվականը ամենադժվար տարիներից մեկը եղավ: Կ. Պոլսում մահացավ նրա մայրը, Ալեքսանդր Միասնիկյանն ու Արտաշես Կարինյանը, ինչպես նշեցինք, ելույթներ ունեցան Թեքեյանի դեկավարած կուսակցության և նրա դեմ, մի շարք հիվանդությունների բարդացման պատճառով նա դժկամությամբ է իրականացնում «Արեւի» խմբագրապետությունը, ամիսներ շարունակ նամակներ չի ստանում նաև Սյուրմեյանից: «Կը մեծնաս,- գրում է Թեքեյանը 1925 թ. հուլիսի 29 թվակիր իր նամակում,- գուցե մեծցեր ես արդեն, զարհուրելիօրէն»<sup>2</sup>: Նույն թվականի նոյեմբերի 8-ին գրած նամակում Թեքեյանը նորից ու նորից է խոսում Սյուրմեյանի նկատմամբ ունեցած իր սիրո ու հավատի մասին՝ գրելով, թե կյանքին մոտենալու «յոյսը տուիր դուն ինձի»: Բայց նույն նամակի շարունակության մեջ Թեքեյանը չի վարանում նաև ասելու. «Բացի վերջին նամակդ թուականը օգոստոս 17-ն է, աւա՛ղ- եւ առաջին էջին վրայ հանդիպեցայ. «Որքան դժուար է ինձի համար նամակ գրել քեզի: ... Նամակները զիս ուղղակի կը ջղայնացնեն»: Իմ արդարացումս, ճշդիւ»<sup>3</sup>:

Այսպես, Թեքեյանին նամակ գրելը Սյուրմեյանի համար այլևս «դժուար» ու «ջղայնացնող» մի բան էր դարձել:

Մի քանի ամիս հետո, 1926 թ. հունիսի 24 թվակիր նամակում Թեքեյանը Սյուրմեյանին գրել է. «Ինձի դէմ նեղցած ըլլալդ ... անկէ կը հասկնամ, որ ամիսներէ ի վեր դուն ալ չես գրեր այլևս, չես լուր տար»<sup>4</sup>:

Ու չնայած Թեքեյանի հորդորին՝ «ամենասիրելի Ջավէնս, մոռցիր քու՝ Պոլսէն մեկնումէդ ի վեր մեր յարաբերութեանց մէջ այս ամենաերկար ընդհատումը ... եւ շուտով, շուտով գրէ ինձի»<sup>5</sup>, Սյուրմեյանի գրքի վաճառքը ձեռնարկելուն և դրամ ուղարկելուն, բարերարի դիմանը՝ նպաստելու համար հիվանդանոցում պառկած Սյուրմեյանի նյութական ու բարոյական ապաքինմանը, նոր նամակ ստանալու սպասումներին, այն հույսին, թե «անզլիերէնի թարգմանուած քանի մը քերթուածները կստանաս» (որոնք իհարկէ չթարգմանվեցին և չուղարկվեցին), Սյուրմեյանի անտարբերությունը մնում է անհողողող:

Մարդ որքան դժբախտ պիտի լինի, որ այսքանից հետո դեռ շարունակի հավատալ: Թեքեյանը շարունակել է սրտով կապված մնալ իր հոգևոր զավակի հետ, շարունակել մտաբերել ու հավատալ Սյուրմեյանի նախկին հավաստիացումներին ու այն խոսքերին, թե իր ուղարկած նամակների «մի

<sup>1</sup> Նամականի, էջ 260:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 280:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 284:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 294:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 295:

բառը հոգիիս մեջի «պարապները» կլցնի», թե «հիացումով ու ժպիտով կշինիմ աչքիս առջև բարի պատկերդ», թե «երկու «Զավակս»-ները» ինձի այնքան ուժ կուտան», թե «հացին չափ պահանջ մըն է ինձի համար քոյ նամակները», թե «ես մեկն եմ, որ չփոխվիր», թե «օրեօր ավելի կբուրեղանա հոգիս, Հայաստանի մեջ ծառ տնկելու և արոք բռնելու կարոտս օրեօր կմեծնա», թե «Ես կատեմ նաև կյանքը, որ դուրս է մեր պապերուն հողերեն», թե «ես շատոնց է, որ զինվոր գրած եմ ինքզինքս գործիդ ու անունիդ պահպանման»: Եվ ամենակարևորը. «Պահեցեք այս թուղթերը որպես մուրհակ ու եթե իմ կյանքս չըլլայ այն, ինչ որ այսքան ատեն կկրկնեմ՝ վառեցեք թուղթերս և հիշատակս ալ միասին»<sup>1</sup>:

1926 թ. սեպտեմբերի 4-ի թվակիր նամակում Թեքեյանը թեև կասկած է հայտնում Սյուրմեյանի՝ իրեն նամակ չգրելու վերաբերյալ, սակայն նորից է հավատացնում նրան, որ «ոչինչ զիս կրնայ անջատել, հեռացնել»: Այսուհանդերձ այս նամակը վերջինն է, որ գրվել է Թեքեյանի կողմից: Սյուրմեյանը նույն թվականի հուլիսի 6-ից հետո արդեն ընդմիջտ դադարել էր Թեքեյանին նամակ գրել: Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանը այս ընթացքում շարունակում էր ապրել իր կյանքի «սեւամաղձ» շրջանը: «Ես շատ մենակ եմ, – գրել է Թեքեյանը վերոհիշյալ նամակում, – ես կատարելապես դժբախտ կ'զգամ ինքզինքս: Ո՛չ մեկ affection (գորով), ո՛չ մեկը՝ որուն կարենամ վստահիլ»<sup>2</sup>:

Բարեբախտաբար քիչ չեղան այն երիտասարդները, ովքեր Թեքեյանին շրջապատեցին ու հավատարիմ գտնվեցին նրա հետագա կյանքի ընթացքում: «Զարմանալի է թափօրը Թեքեյանի տղոց, – գրում է Շահնուրը Թեքեյանին նվիրված իր «Ոսկիե կշիռը» հոդվածում, – գուրս բանաստեղծը կը շրջապատե ուշադիր գուրգուրանքով եւ եղբայրական ազնուագոյն սերով: Անոնք իրն են, ինք զանոնք»<sup>3</sup>:

Ցավալին այն է, որ Թեքեյանը միայն հոգեպես չէ, որ ընկճված էր: Վատացել էր նաև նրա առողջությունը, հաճախակի էին դարձել շնչարգելությունները: Բայց ամենասարսափելին նրա «առողջ» աչքի\* վիճակն էր, որն այլևս առողջ չէր ու դադարել էր լավ տեսնելուց:

Ճակատագրի քմահաճույքով Թեքեյանը հենց այս դժվարին շրջանում (1925 թ.) գրեց իր ամենազմայլելի, խոր ու ողբերգական բանաստեղծություններից մեկը՝ «Մեկ հատիկս» խորագրով:

<sup>1</sup> Այս ամենը տե՛ս **Թեքեյան Վ.**, Լևոն-Զավեն Սյուրմեյան:

<sup>2</sup> Նամականի, էջ 297:

<sup>3</sup> **Շահնուր Շ.**, Լրագրական էջեր, Երևան, 2016, էջ 147:

\* Հասարակական կյանքում ու մամուլում կուսակցական բուռն պայքարի համար հակառակորդ կուսակցությունը 1916 թ. սեպտեմբերի 7-ին քինախնդրորեն մահափորձ էր կատարել Թեքեյանի դեմ, որի պատճառով նա զրկվել էր իր աջ աչքից:

Իմ մէկ հատի՛կս... օ՛հ ինչպէ՛ս սիրտըս վըրադ կը դողայ՝  
Երբ կը տեսնեմ քեզմով քեզ.  
Քու արցունքո՛վըդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝  
Որ դուն ալ զիս չըլըքես...:

Խոսելով այս բանաստեղծության մասին՝ Շահան Շահնուրն իր վերոհիշյալ հոդվածում գրում է. «Հագուադէպ ախտ մը կը սպառնար մարել «Մէկ հատիկ»ին լոյսը: Փոխադրուեցաւ հիվանդանոց (Օթէլ Տիէօ): Հրապարակելով Կեդրոնականի իր սաներէն երիտասարդ մը, որ կը շարունակէր իր ուսումը, օրապահիկը շահելով հանդերձ: Այս պատուական հայորդին\*...որդիական սիրով կառչեցավ հիւանդի սնարին: ...Թէքէեան խորունկ սփոփանք քաղեց իր այս երիտասարդ բարեկամին հոգածու վերաբերումէն: Երիտասարդը հիւանդանոց կը փութար ամէն օր, առանց բացառութեան»<sup>1</sup>: Շահնուրն այդ երիտասարդի մասին գրում է, որ նա աշխատատեղում բռնկված հրդեհի պատճառով այրվել է, և ինքը մամուլում («Պայքար» օրաթերթում) պետք է տեղեկություն որոնի նրա մասին: Իսկ հուղարկավորությանը մասնակցած Թեքէյանի մասին վկայում է. «Ինք կը մնար շշմած, անէացած: Երկու ձեռքերը պարզած էր դէպի առաջ, օգնութիւն հայցելու ձեռով եւ իր դէմքը առած էր մեղրամումի գոյն»<sup>2</sup>:

Մի բան ակնհայտ է. Թեքէյանը այդ «սողոց» մեջ փնտրել ու գտել է իր իսկ իսկությունը, և այդ երիտասարդների մի մասը հանձին Թեքէյանի գտել է իր որբության մխիթարանքը և հովանավորին: Թեքէյանը, ինչպես գրում է Արշամ Տատրյանին ուղղված իր նամակներից մեկում, ինքը «հեռու էր դրամատեր ըլլալէ» և սակայն իր սուղ միջոցներից օգնում էր շատերին:

Նորից հարցնենք՝ ինչն էր պատճառը, որ խզվեցին Թեքէյանի ու Սյուրմեյանի՝ այնքան մեծարված հոր ու փայփայված զավակի հարաբերությունները:

Մեկնությունները տարբեր են եղել նաև գրական շրջանակներում:

Սյուրքահայ գրող, խմբագիր, Վ. Թեքէյանի նախկին սան, մտավորական Պետրոս Զարոյանը այս խնդրին անդրադարձել է շատ ավելի կտրուկ: Բեյրութում լույս տեսնող «Անի» ամսագրում 1952 թ. տպագրած իր «Վահան Թէքէեան այնպէս՝ ինչպէս ճանչցայ զինք» հոդվածում խոսելով կյանքի ընթացքում Թեքէյանի հիասթափությունների մասին՝ «ապահովաբար խոշորագոյնը» նա համարում է Սյուրմեյանից կրածը. «Կը մտածիմ ընդվզումով ու ցասմամբ: Որովհետեւ ... Վահան Թէքէեան, իր ազնուական ասպետի կառոյցով, կրնար չդրդիլ իր հիմերէն՝ դասալքութեանց մեծագոյնին հանդէպ: Երբ

---

\* Թեքէյանի կյանքում այդպիսի մի նվիրյալ հոգի էլ եղավ բանաստեղծ Ժագ Հակոբյանը, ով Թեքէյանի կյանքի վերջին տարիներին անմնացորդ հոգատարություն ու սեր ցուցաբերեց քերթողի նկատմամբ:

<sup>1</sup> Շահնուր Շ., էջ 148-149:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 149:

մանավանդ այդ դասալքությունը կու գար մեկէն, որուն վրայ կեդրոնացուցած էր իր բովանդակ հաւատքը: Ինքզինք անոր մէջ ու անով իրագործուած եւ ամբողջացած տեսնելու աստիճան:

Վահան Թեքէեան չարաչար խաբուեցաւ Պրն. Լեւոն Զաւէն Սյուրմէլէեանէն»<sup>1</sup>:

Այնուհետև Պ. Զարոյանը գրում է, որ ինքը պիտի մերժեր անունն անգամ տալ «պարոնի մը», եթէ այն կապված չլինէր Թեքէյանի անվան հետ. «Կապ՝ գոր շահագործեց այնքա՛ն շուկայիկ վարպետութեամբ»<sup>2</sup>:

Պ. Զարոյանը իր վերոհիշյալ հոդվածում մեջբերում է Թեքէյանին գրած Սյուրմէլյանի՝ 1923 թ. հունվարի 22-ի թվակիր նամակից մի ամբողջ հատված՝ շեշտելու համար վերջինիս ուրացումը ինչպես իր ծրագրերից, այնպես էլ իր հավաստիացումներից. «Բարեկամ ամերիկացիները հոս ինձի կըսեն, թե ես կփոխվիմ անպայման, անպայման «կամերիկանամ»: Ըստ իրենց, որ երեք ամերիկացի չեն կրնար զիս նվազագույն չափով «փոխել», բայց ես կրնամ երեք ամերիկացի հայ ընել»: Այս տողերը իհարկե հաստատումն են ոչ այնքան ուրացման, որքան փաստումն այն բանի, որ Սյուրմէլյանը իրոք «ամերիկանանում» էր, իրոք փոխվում որպես երագող և դառնում հաշվի մարդ, որի վկայություններից են Թեքէյանին գրած նրա այն խոստովանությունները, թե Ամերիկա գնալու գլխավոր նպատակը... «իր առողջության հարցն էր», և կամ՝ «առհասարակ Զավենը՝ անկախ մարդ մը եղած» է, և կամ՝ «երկար ժամանակվա համար ինձմե երկար նամակ, ընթերցում կամ ոտանավոր մի պահանջե», մեկ այլ դեպքում էլ գրում, որ աղքատի, որբի, Պոլսի Զավենի պես ինքը այլևս չի ուզում ապրել: Տպագրվել և վճարվել՝ ահա այն նոր երագանքը, որ սկսում է գայթակղել Սյուրմէլյանին, ահա նրա նոր կյանքի հետաքրքրություններն ու բովանդակությունը: Ամերիկյան անհոգ կյանքն ու ապահով ապրելակերպը, որի մեջ, շնորհիվ իր անգլիագիր գրությունների, քիչ-քիչ մտնում էր Սյուրմէլյանը, լայն հնարավորություններ էր պարզում նրա առջև, որի համեմատ, իրոք, ոչինչ էր կյանքի այն կիսաքաղց ընթացքը, որում հայտնվելու էր ինքը, եթե շարունակեր հայերեն գրել ու ստեղծագործել: Իսկ այդ մասին Թեքէյանին գրել նշանակում էր դավաճանել կրկնակի և, ինչպես ասված է «Աստվածաշնչում», «ուրանալ՝ դեռ աքաղաղը չկանչած»:

Այն, որ Ավետիս Սանճյանը Լոս Անջելեսում տպագրած իր «Վահան Թեքէեան. նամականի» գրքի ծանոթագրությունների բաժնում նշում է, թե Սյուրմէլյանն իրեն ասել է, որ Թեքէյանին չգրելու պատճառը իր հիվանդությամբ նրան չանհանգստացնելն է եղել, պարզապես չի համապատասխանում իրականությանը:

---

<sup>1</sup> «Անի», 1952, հունվար, էջ 37:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 487:

1926 թ. տարեսկզբին Սյուրմեյանին գրած Թեքեյանի նամակից երևում է, որ նա լավատեղյակ է եղել նրա հիվանդությանը, անգամ գոտեպնդել է նրան և հույս հայտնել, որ նա պիտի շարունակի գրել՝ հենց Թեքեյանին ավելի անձկության և «անհանդուրժելի զգայնությամբ» չմատնելու համար<sup>1</sup>: Անգամ եթե ընդունենք, որ Սյուրմեյանը իրոք չի ցանկացել իր հիվանդությամբ ավելորդ հոգս պատճառել Թեքեյանին, ակամայից հարց է առաջանում, հապա ինչու նա չգրեց իր ապաքինվելուց՝ 1929 թ.-ից հետո:

Բայց պատահեց այնպես, որ տասնամյակներ անց Սյուրմեյանը հանկարծ իրեն «պզտիկ» զգաց Թեքեյանի նամակների առջև: Դժվար է ասել հասկացա՞վ, թե՞ զիտակցեց, որ ինքը «արժանի չէր անոնց»<sup>2</sup>:

Ինքը՝ Սյուրմեյանը, իրենց բաժանման վերաբերյալ որևէ խոսք չի ասում: Վ. Թեքեյանի մասին գրած իր անգլերեն հոդվածում\* հասնելով այդ հարցին՝ նա բավարարվում է՝ գրելով միայն, թե «ատիկա ուրիշ պատմություն է»: Բայց Սյուրմեյանը դրանից առաջ խոսում է Թեքեյանի «Ոչ մեկ բարեկամ» բանաստեղծության մասին, որը ներփակ նամակով իրեն էր ուղարկել Թեքեյանը, ուր, ի շարս այլ մտքերի, կարդում ենք նաև հետևյալ տողերը. «Օ՛հ, գա՛լ դէմ առ դէմ // Ու անցնի՛լ՝ առանց երբեք իրարու // Քիչ մ՛ըսփովի, նեցուկ կամ յոյս ըլլալու»: Արդյո՞ք այդ «նեցուկի» կամ «յոյսի» հետզհետե խամրող կրակները չէին նաև, որ մարելու էին փոխադարձ բարեկամության բորբոքված ջահերը:

Կարելի է և պետք է հարցնել. իսկ Սյուրմեյանի՝ անգլերենով ստեղծած հայանպաստ ստեղծագործությունն էր... Մի՞թե հարկ է զանց առնել նրա՝ 1945 թ. տպագրված «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք»\*\* և 1950 թ. տպագրած «98.6» վեպերը, 1964 թ. հրատարակած «Սասնա ծռերի» անգլերեն թարգմանությունը (այստեղ ստորագրել է Լևոն Սյուրմեյան՝ առանց Ջավենի), 1968 թ. տպագրած «Անմահական խնձորները» հայկական ժողովրդական հեքիաթների ընտրանին, 1968 թ. հրատարակած «Վիպագրության տեխնիկա, չափ և խենթություն» գրականագիտական, արվեստաբանական, լեզվաբանական աշխատությունն ու բազում հրապարակագրական հոդվածներ:

---

<sup>1</sup> Նամականի, էջ 291:

<sup>2</sup> Տե՛ս Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէյանին, էջ 12, Սյուրմեյանի «Առաջաբանը»: Այդ գրքում զետեղված է նաև Զ. Սյուրմեյանի «Լույս զվարթ» ժողովածուն, որը գրքի երկրորդ հրատարակությունն էր: Բ. Նուրիկյանի այս նախաձեռնությամբ որոշված էր գրքից առաջացած հասույթը հատկացնել Վահան Թեքեյանի անունով հիմնադրամ ստեղծելուն, որը պիտի զբաղվեր սփյուռքահայ գրողների քաջալերանքով:

\* Տե՛ս «Մովետական գրականություն» ամսագրում տպագրված հոդվածը:

\*\* Սյուրմեյանը առաջին անգամ ազգային ու քաղաքական կարևոր արժեք ներկայացնող այս գրքի շապիկի վրա է իր Զավեն Սյուրմեյան անվանը ավելացրել Լևոն անունը, որը նրա գոհված մորեղբոր անունն է, և ով, ինչպես գրում է նամակներից մեկում, իր «ամենէն շատ սիրած ազգականն էր» ու «վերջին ապրող տղամարդը» իր մոր՝ Տիրատուրյանների գերդաստանից:

րը: Բնականաբար՝ ոչ: Բայց դա արդեն այլ խոսակցության նյութ է, կարևոր և գնահատելի հայ գրականության պատմության համար, որը մեկ այլ կողմից է պարզում այն իրողությունը, որ սփյուռքի քառուղիներում գնալով պակասում են հայերեն թերթեր ու գրքեր թե՛ հրատարակողները և թե՛ ընթերցողները, որ անգամ տաղանդավոր հայ ստեղծագործողները «պարզ ապրուստի մը պետքերուն կարօտ են»: Այս իսկ պատճառով գուցե մեղադրելի չէ Սյուրմեյանի հեռացումը հայ գրականությունից, ով, ինչպես հետագայում պիտի գրեր, իրեն «շատ խոնարհ» պիտի զգար հայ գրի ու գրականության առջև, քանի որ հենց հայ գրողին է վերապահված բորբոք պահելու մեր մշակույթի կրակները օտար ափերին: Թեև այս հարցում ևս մերժելի տեսակետ է ցուցաբերել Սյուրմեյանը: Մեր հողվածում արդեն հիշատակված «Վահան Թեքեանի նամակները Լեւոն Ջաւէն Սիւրմէլեանին» գրքի իր առաջաբանում նա գրում է, որ պետք է շահել «կռիւր Հայ Հոգիին», բայց անմիջապէս ավելացնում. «Չենք կրնար դիմադրել պատմութեան ընթացքին: Ուշ կամ կանուխ՝ պիտի կորսնցնենք մեր լեզուն, բայց փրկելու ենք Հայ Հոգին: Պետք է որ պահենք մեր եկեղեցին, մեր երաժշտութիւնը, մեր գրականութիւնը, ի հարկին թարգմանութեամբ, կամ անգլերէնով»<sup>1</sup> (Յի՛ց – Ա. Ա.): Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են, քանի որ առանց մեր լեզվի հայ հոգի չի կարող լինել և չի կարող պահպանվել աշխարհի և ոչ մի լեզվով:

Այդուհանդերձ, մեզ հետաքրքրողը մեր հողվածում եղել է մինչև այդ վեպերն ու ժողովածուները ստեղծող Սյուրմեյանն ու նրա կյանքի այն հատվածը, որը կապված է մեր գրականության մեծագույն դեմքերից մեկի՝ Վահան Թեքեյանի հետ:

1926 թ. հունվարի 18 թվակիր իր նամակում Թեքեյանը Սյուրմեյանին տեղեկացրել է, որ ինքը օգնել է ևս հինգ որբի՝ ընդունվելու Կահիրեում բացված Պերպերյան գիշերօթիկ վարժարան, ովքեր արդեն «կը հաւտան սիրոյ» և պիտի կարողանան իրենք ևս սիրել կյանքը, հույս հայտնել, որ այդ որբերը իր մասին պիտի մտածեն «իբրեւ մէկու մը, որ բախտին դէմ բախտ եղաւ իրենց», ու ինքը, երբ մենակ է մնում, հարց է տալիս իրեն.

Հաշուեյարդար. ի՞նչ մնաց, կեանքէն ինձի ի՞նչ մնաց,

- Ինչ որ տրւի ուրիշին, տարօրինա կ'ա՛յն միայն:

Թեքեյանը նամակը վերջացրել է՝ կոնկրետացնելով իր խոսքը՝ այս անգամ ուղղված Սյուրմեյանին. «- Եւ ինչ որ քեզի կուտամ իբրեւ մտածում եւ իբրեւ զգացում, ինձի կը մնայ ամբողջովին...»<sup>2</sup>:

Այդպես ամբողջովին Թեքեյանին մնացին նաև Սյուրմեյանի հասցրած բաժանումն ու վիրավորանքը: Սա է բուն ճշմարտությունը: Ճշմարտություն, որը շատ տխուր է:

<sup>1</sup> Վահան Թեքեանի նամակները Լեւոն Ջաւէն Սիւրմէլեանին, էջ 16:

<sup>2</sup> Նամականի, էջ 292-293:

Չնայած խզումին՝ Ամերիկայում բնակվող Սաթենիկ Կրեկորիին ուղղված՝ 1944 թ. հունիսի 20 թվակիր նամակում Թեքեյանը մեծահոգաբար հետաքրքրվել է Լ. Ջ. Սյուրմեյանով, հարցրել, թե արդյոք նա թղթակցում է Սյուրմեյանի հետ. «Եթե այո՝, ըսե՛իք, որ իր յաջողություններով ուրախ եմ ու պիտի ուրախանամ նաեւ իր մէկ երկտողովը»<sup>1</sup>:

Այսպես, ամեն բանից վեր, Թեքեյանն ունեցել է նաև մեծ հոգի, որը նրա ամբողջ կյանքի ընթացքում բաբախեց նաև ուրիշների համար՝ լինեն նրանք օտարներ, գրական առաջին քայլերն անող երիտասարդներ, թե ծածկ ու աշխատանք չունեցող որբեր: Չավեն Սյուրմեյանի հետ հարազատություն ստեղծելուն զուգընթաց ու նրանից բաժանվելուց հետո ևս Թեքեյանը նյութական աջակցություն է ցուցաբերել և կամ բարեկամություն արել մեր գրականության մի շարք նշանավոր դեմքերի հետ, որոնցից հատկապես հարկ է նշել Արշամ Տատրյանի, Գեղամ Ֆեներճյանի, Շահան Շահնուրի, Պետրոս Ջարոյանի, Վահե Վահյանի, Վահե Հայկի, Ջարեհ Որբունու, Անդրանիկ Անդրեասյանի ու շատ այլոց անունները:

Նրանց բոլորից, ինչպես ինքն է խոստովանում, Թեքեյանը փոխադարձ հարգանք է ստացել, մանավանդ ուրախացել նոր ուժերի ասպարեզ գալով. «Եթե կայ բան մը, որ կրնայ ինձի իրական սփոփանք եւ սիրոյ երկարաձգում ըլլալ՝ ատիկա երիտասարդ սրտերու մէջ գտած արձագանքս է»<sup>2</sup>:

Ցավոք, այդ ամենի մեջ եղավ ու մնաց մի անամոք սպի, որը, թվում է, ոչ մի սփոփանք այդպես էլ չունեցավ:

Սույն հոդվածով մենք չենք ցանկացել հետին թվով, տարիների հեռավորությունից ստանձնել դատավորի դեր և արդարացնել կամ մեղադրել կողմերից որևէ մեկին: Մենք հակված չենք եղել նաև ասելու, թե Սյուրմեյանի կյանքի երկրորդ մասը նվազ արժեքավորման է արժանի իր կյանքի առաջին մասի պատճառով: Ընդհակառակը, անգլիագիր Սյուրմեյանը անուրանալի և կարևոր դեր խաղաց իր գեղարվեստական արձակով, որն օտար ընթերցողներին ճանաչելի դարձրեց մի կողմից մեր ազգային ճակատագրին, մյուս կողմից մեր գրական ու հոգևոր մշակութային արժեքներին, որը եկավ հաստատելու գրողի այն խոսքը, թե «չկա՛յ մե՛կը, որ հայ լեզուն սիրէ ինձմէ աւելի խորապէս: Բայց ես կը հաւտամ աշխատանքի բաժանումին: Եւ կրնամ որպէս ամերիկեան գրող աւելի՛ մեծ չափով ծառայել իմ ժողովրդիս ու անգլերէն գրելով՝ չեմ դադրիր հայ գրող մը ըլլալէ»<sup>3</sup>:

Բայց կա փաստը. փաստը բարեկամության և փաստը բաժանման: Հետևաբար երևույթը նաև ճանաչողական արժեք ունի՝ և ինքնին հետաքրքրական է թե՛ մարդկային հոգեկան փոխհարաբերությունների տեսակետից և

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 479:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 355:

<sup>3</sup> Տե՛ս Սիրմեյանի Յառաջաբան // Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Ջաւէն Սիրմեյանին, էջ 17:

թե՛ գրական-մշակութային առումով, քանի որ խզման պատճառի (կամ պատճառների) վերհանումը ստույգ է դարձնում Թեքեյան և Սյուրմեյան անհատների ոչ այնքան հոգեբանական ու անձնական շփումները, որքան ազգային մտածողության ու հետաքրքրությունների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումները իրենց կյանքի որոշակի շրջափուլում:

**Արշուն Աვაգյան – *Vahan Tekeyan – Levon Zaven Syurmelyan: тесная дружба и безвозвратное расставание***

В статье представлена история дружбы и расставания двух армянских писателей Вагана Текеяна и Левона Завена Сюрмеляна в 1920-х гг. Основываясь на переписке двух писателей, рецензиях и других материалах, написанных друг о друге, а также на некоторых имеющихся в литературоведении оценках и трактовках, автор показывает, что на взаимоотношения Текеяна и Сюрмеляна оказали влияние как литературные, общественные и гражданские мысли, так и сугубо личные качества и черты характера, которые, с одной стороны, способствовали укреплению между ними дружбы, а с другой – явились препятствием для ее продолжения.

**Artsrun Avagyan – *Vahan Tekeyan – Levon Syurmelyan: Close Friendship and Irrevocable Parting***

The article presents the history of friendship and parting of two Armenian writers - Levon Zaven Syurmelyan and Vahan Tekeyan during 1920s. Relying on the letters, literary reviews and other materials written to each other, as well as on some literary-critical estimates and interpretations, the author shows that literary, social and political thoughts, as well as personal traits and characteristic features of the two writers had an impact on the relationship between Tekeyan and Syurmelyan, which on the one hand promoted the establishment of friendship between them, and were an obstacle for the continuation of that friendship, on the other hand.